

## Թարգմանության մեջ անփոփոխակի ուսումնասիրության որոշ հայեցակերպերի շուրջ

Հ. Գ. Բաղդասարյան

Երևանի պետական համալսարանի ռումանական բանասիրության ամբիոն, Երևան, Հայաստան  
Corresponding author. E-mail: h.baghdasaryan@ysu.am

Paper received 01.03.18; Accepted for publication 09.03.18.

<https://doi.org/10.31174/SEND-Ph2018-159VI46-02>

**Անփոփոխակի:** Հոդվածը նվիրված է թարգմանության մեջ անփոփոխակի քննությանը՝ հիմնվելով այս խնդրի ուսումնասիրության տարբեր հայեցակերպերի վրա: Քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անփոփոխակի բնագրի և թարգմանության տեքստերի այն ընդհանուր տարրն է (իրադրություն, տեղեկատվություն, գործառույթ, ոճ, կառուցվածք և այլն), որը որոշվում է բնագրի տեքստի հեղինակի հաղորդակցական դիտավորությամբ, տվյալ ասույթի գործառական-հաղորդակցական բնութագրումներով, ինչպես նաև թիրախ լեզվի և մշակույթի առանձնահատկություններով:

**Բանալի բառեր.** անփոփոխակ, թարգմանություն, նույնականություն, հաղորդակցական դիտավորություն, ասույթի գործառական-հաղորդակցական հայեցակերպ

Թարգմանության տեսության հիմնական հասկացությունը նույնականությունն է, որը սահմանվում է որպես թարգմանության տեքստի ճշգրիտ համապատասխանություն ելակետային տեքստին, ինչը ենթադրում է նրանց լիակատար համընկնումը իմաստային, գործառական-ոճական և գործաբանական հայեցակերպերում: Իսկ ո՞րն է այն ընդհանուրը, որը թույլ է տալիս նույնականացնել թարգմանության տեքստը բնագրի տեքստի հետ, և այն համարժեք համարել բնագրին: Ի՞նչն է անփոփոխ մնում բնագրի տեքստի միջլեզվական վերափոխումների արդյունքում:

Այն ինչ մնում է անփոփոխ բնագրի տեքստի վերափոխումներից հետո, թարգմանության տեսության մեջ ընդունված է անվանել անփոփոխակ: Անփոփոխակը ենթադրում է ինչ-որ անփոփոխ, համընդհանուր տարր, որն առկա է թարգմանության բոլոր տարբերակներում: Հ. Զ. Պետրոսյանը «Հայերենագիտական բառարանում» նշում է, որ անփոփոխակը լեզվի «կառուցվածքային տարր է. տվյալ միավորի վերացական (վերացարկված) արտահայտությունը՝ վերառնված նրա խոսքային մասնավոր, կոնկրետ դրսևորումներից»: Կառուցվածքային լեզվաբանության տերմինաբանության մեջ անփոփոխակների անունները բաղադրվում են -ema (օր. fonema, morfema, semema, semantema և այլն), իսկ հայագիտական աղբյուրներում համապատասխանաբար՝ -ույթ վերջածանցով (օր. հնչույթ, ձևույթ, իմաստույթ, շարահյուսույթ և այլն) [1, էջ 49]:

Եթե լեզվաբանական գրականության մեջ անփոփոխակն անմիջականորեն հարաբերակցվում է լեզվի վերացական

համակարգի հետ, ապա այն, ինչ թարգմանական հայեցակերպում կարելի է առանձնացնել որպես անփոփոխակ, չի առնչվում լեզվի համակարգայինության գաղափարի հետ և չի կարող լինել լեզվի վերացական համակարգի տարր կամ էլ հիմք հանդիսանալ որևէ ենթահամակարգի համար:

Ռ. Մինյար-Բելորուչևը նշում է, որ թարգմանության մեջ անփոփոխակի մասին կարող ենք պատկերացում կազմել միայն բնագրի և ելակետային իրադրության միջոցով [8, էջ 32]: Մյուս իրացումների (թարգմանության տարբերակների) միջոցով կարելի է գաղափար կազմել բնօրինակի մասին, որը հանդես է գալիս որպես անփոփոխակի իրացումներից մեկը՝ բնականաբար առաջինը: Մյուս իրացումները (թարգմանության տարբերակները) կապված են անփոփոխակի հետ միջնորդավորված ձևով՝ առաջին իրացման՝ բնօրինակի միջոցով: Ինչպես տեսնում ենք, թարգմանության անփոփոխակի տարբերակ է համարվում և՛ բնագրի տեքստը, և՛ այդ տեքստի բոլոր թարգմանությունները այլ լեզվով կամ լեզուներով: Այս խնդիրը այլ ձևով է մեկնաբանում հայտնի թարգմանաբան Բարխուդարովը՝ նշելով, որ անփոփոխակը ելակետային և թարգմանության տեքստերի իմաստային բովանդակության ընդհանրությունն է [2, էջ 11]: Տվյալ դեպքում, մեր կարծիքով, այս հարցի թյուրմբնումը պայմանավորված է լեզվական և խոսքային իմաստների ոչ տարբերակված ընկալմամբ:

Կարևորելով լեզվաբանական և թարգմանաբանական ուսումնասիրություններում անփոփոխակի տարբերակման հարցը՝ այնուամենայնիվ, պետք է նշել, որ անփոփոխակի մեկնաբանման շուրջ թարգմանաբանության մեջ

դեռևս չկա միասնական կարծիք: Առաջին հերթին դժվար է որոշել տեքստի այն բնութագրիչները, որոնք անփոփոխ են մնում թարգմանության ժամանակ: Թարգմանաբանական գրականության մեջ գործածվում են անփոփոխակի էությունը բնութագրող մի շարք հասկացություններ՝ «իմաստային անփոփոխակ», «գործառական անփոփոխակ», «իրադրային անփոփոխակ», «տեղեկատվական անփոփոխակ», «կառուցվածքային անփոփոխակ» և այլն: Սակայն նշված բնութագրիչներից որի պահպանումն է ապահովում էլակետային և թարգմանության տեքստերի նույնականությունը:

Մինյար-Բելորուչը գտնում է, որ թարգմանության ժամանակ պետք է պահպանել ոչ միայն էլակետային տեքստի բովանդակությունը կամ ձևը, այլ նաև այն տեղեկատվությունը, որը հաղորդման աղբյուրի կողմից նախատեսված է փոխանցել թարգմանության լեզու՝ այն անվանելով հաղորդում (сообщение): Այս տեսանկյունից հաղորդման և իմաստի համընկնման մասին կարելի է խոսել միայն պայմանականորեն, քանի որ իմաստը տեղեկատվության երկու հիմնական տեսակների՝ իմաստային և իրադրային տեղեկատվության փոխազդեցության անանցյալն է, հասցեատիրոջ ուղեղում դրանց վերափոխման «պրոդուկտը», մինչդեռ հաղորդումը այն տեղեկատվությունն է, որը նախատեսված է փոխանցել թարգմանության հասցեատիրոջը: Ելնելով տեղեկատվության տեսության սկզբունքներից՝ Մինյար-Բելորուչը անփոփոխակ է համարում «փոխանցման համար նախատեսված հաղորդումը կամ տեղեկատվությունը» [8, էջ 36]: Դա կարող է լինել միայն իմաստային կամ իրադրային տեղեկատվություն, այդ երկու տեղեկատվության զուգակցումը կամ էլ սոսկ տեղեկատվություն կառուցվածքի մասին: Բոլոր դեպքերում հաղորդման կառուցվածքը միշտ փոփոխուն է և կախված է հաղորդակցության նպատակադրումից:

Ինչպես տեսնում ենք, Մինյար-Բելորուչի տեսակետից անփոփոխակ է համարվում հաղորդման համար նախատեսված տեղեկատվությունը՝ հաշվի չառնելով գործաբանական հարմարեցման անհրաժեշտությունը, որը կատարվում է բնագրի հեղինակի հաղորդակցական դիտավորությունը պահպանելու համար և պայմանավորված է լեզվական և արտալեզվական տարբեր գործոններով: Ըստ Վ. Սդոբնիկովի և Օ. Պետրովայի՝ գործաբանական հարմարեցման արդյունքում փոխվում է հաղորդվող տեղեկատվության (այն է՝ հաղորդման) կազմը և կառուցվածքը, հետևաբար և հաղորդումը փոխվում է թարգմանության մեջ և չի կարող դիտարկվել

որպես թարգմանության անփոփոխակ [3, էջ 274]:

Քննվող խնդրին այլ տեսանկյունից են մտտենում ռուս հայտնի թարգմանաբաններ Գ. Մորելկովսկին և Լ. Լատիշևը [4, էջ 23-26]: Ըստ այս տեսաբանների՝ անփոփոխակ է համարվում «մտքի անփոփոխ բովանդակությունը՝ իր բոլոր նրբերանգներով», ընդ որում, մտքի այդ էլակետային բովանդակությունը ամբողջապես պահպանվում է թարգմանության մեջ: Անփոփոխակը մի այնպիսի հասկացություն է, որ մարդը ստեղծել է իր գիտակցության մեջ՝ ուսումնասիրելով արտահայտության վերափոխման գործընթացները: Անփոփոխակը չի կարող նյութական թաղանթ՝ կերպավորում ստանալ, այն կարելի է միայն մտովին զգալ, քանի որ նյութապես այն ներկայացվում է միայն իր տարբերակներում: Այսպես, օրինակ, հայտնի է, որ տարբեր լեզվամշակութային համայնքներում ավանդաբար կնոջ գեղեցկությունը գովերգելու համար օգտագործվում են տարբեր խորհրդանիշներ: Իսպանական գրականության մեջ և ժողովրդական հեքիաթներում գեղեցկության վառ խորհրդանիշներ են վարդը, աստղը, արևը, լուսինը, արքայադուստրը և այլն: Քննենք մի քանի օրինակ էսպիինոսայի իսպանական ժողովրդական հեքիաթներից [10].

*Y la madre le escribió a su hijo que su mujer había dao a luz dos niños como dos rosas (La niña sin brazos, p. 350).*

*Y se puso en la carta que gorviera porque su mujé había dao a lu do niño mu guapito, mu guapito, que parecían dos estrella. (La cueva del dragón, p. 401)*

*La niña tuvo dos niños más hermosos que el sol. (El cisquero y el demonio, p. 354)*

Նայ իրականության մեջ նույն իրադրության մեջ նույնպես գործածվում են արև, աստղ, ջերման (վայելչակազամ և գեղեցիկ կին՝ աղջիկ), վարդ և այլ բառեր: Նետաքրքիր է նշել, որ եթե Կուբայում աղջկա գեղեցկությունը նկարագրելու համար կարելի ասել *eres tan bella como la rosa de invierno* (բառացի՝ գեղեցիկ ես, ինչպես ձմեռային վարդը), ապա մեր իրականության մեջ այդ արտահայտության բառացի թարգմանությունը կարող է առաջ բերել բացասական հարանշանակություններ՝ տվյալ դեպքում նախապատվությունը տալով *գեղեցիկ ես, ինչպես մայիսյան վարդը* արտահայտությանը՝ հաշվի առնելով նաև գրական ավանդույթի դերը:

Վերը քննարկված օրինակներում մտքի նույն բովանդակությունը արտահայտվում է զանազան տարբերակներով, այսինքն՝ խոսքը միևնույն անփոփոխակի տարբերակների մասին է: Այն ինչ անվանում են մտքի անփոփոխ բովանդակություն, այսինքն՝ տվյալ դեպքում գեղեցկության խորհրդանիշը տարբեր լեզվամշակութային

համայնքներում, անփոփոխակն է, իսկ նրա տարբեր դրսևորումները լեզուներում՝ դրա տարբերակները: Փոփոխակ-անփոփոխակ այս հարաբերակցությունն ունի նաև խորը լեզվաբանական հիմնավորում: Ակադ. Ջահուկյանը նշում է, որ ինչպես բնության մեջ կան տարբերություններ և իրերի ու երևույթների միջև ընդհանուրը բացահայտվում է ճանաչողության գործընթացում, այդպես էլ փոփոխականությունը լեզվի ընդհանուր բնութագիրն է, իսկ անփոփոխականությունը դիտվում է որպես վերացարկում [5, էջ 16]:

Շատ թարգմանաբանների կարծիքով թարգմանության անփոփոխակը ասույթի իմաստն է՝ հաշվի առնելով, որ թարգմանության տեքստը, որպես կանոն, բովանդակում է նույն իմաստը, ինչ և բնագիրը, մինչդեռ իմաստային տեղեկատվությունը կարող է փոխվել: Կարելի է կարծել, որ իմաստը տեքստի այն անփոփոխորակն է, որը միշտ պետք է պահպանվի՝ անկախ նրանից, թե բովանդակային առումով (այսինքն՝ իմաստային տեղեկատվության առումով) տեքստը ինչպիսի փոփոխություններ է կրել թարգմանության մեջ:

Այնուամենայնիվ, եթե թարգմանության անփոփոխակը համարենք իմաստը, ապա թարգմանության հաղորդակցական-գործառական բնորոշման տեսակետից ի հայտ են գալիս հակասություններ: Իմաստը միշտ չի պահպանվում, քանզի թարգմանչի գործաբանական գերխնդիրը ենթադրում է տեքստի իմաստային կառուցվածքի փոփոխություններ: Այսպես, հայտնի է, որ գովազդային տեքստը նաև առևտրային քարոզչության ձև է և նպատակ է հետապնդում հորդորելու տվյալ անձին՝ գնելու տվյալ ապրանքատեսակը: Թարգմանության ժամանակ փոխվում է դրա իմաստային կառուցվածքը, քանի որ միևնույն գովազդային խորհրդանիշները տարբեր ձևով են ընկալվում տարբեր լեզվամշակութային համայնքներում: Այսպես, օրինակ, Օննդյան տոներին կազմակերպվող ազգային վիճակախաղը իսպանական մշակույթի անքակտելի մասն է կազմում, որի ամենահայտնի գովազդներից վերջին տարիներին առանձնանում են El mayor premio es compartirlo (բառացի՝ լավագույն շահումը այն կիսելն է), En Navidad, todos somos un poco más humanos (Օննդյան տոներին բոլորս մի քիչ ավելի մարդկային ենք) գովազդները, որոնք աչքի են ընկնում իրենց ընդգծված հումանիստական բնույթով, թեև այն մշակույթներում, որտեղ վիճակախաղը կենսական խնդիրներ լուծելու մեծ հույսեր է ներշնչում, բառացի թարգմանելիս կորցնում են իրենց գործաբանական ներուժը: Նման տեքստերի թարգմանության ժամանակ, պահպանելով

հաղորդողի հաղորդակցական դիտավորությունը՝ «գնե՛ք այս ապրանքատեսակը», այսինքն՝ տվյալ տեքստի առանձնահատուկ գործառույթը, միաժամանակ պետք է հաշվի առնել, որ ընկալողի հոգեբանությունը, հետևաբար և փաստարկման տրամաբանությունը կարող են տարբեր լինել տարբեր լեզվամշակութային համայնքներում: Ինչպես նշում են Վ. Սդոբնիկովը և Օ. Պետրովան, գոյություն ունի դիալեկտիկական կապ ասույթի տրամաբանական կարգերի՝ հաղորդման, իմաստի և գործառույթի միջև, որի շնորհիվ անփոփոխակը ձեռք է բերում ամբողջական բնույթ և ներառում տեքստի տարբեր հայեցակետեր [3, էջ 278-279]: Տեքստի գործառույթը հարաբերական կախվածություն ունի ստորին աստիճաններից՝ իմաստից և հաղորդումից: Իսկ դա նշանակում է, որ տեքստի գործառույթը վերարտադրելու համար հարկ է վերարտադրել նաև հաղորդումն ու իմաստը, ինչպես, օրինակ գիտատեխնիկական, վարչագործարարական տեքստերը թարգմանելիս, որտեղ տեքստում ներառված տեղեկատվության հաղորդումը տեքստի գործառույթի հաղորդման նախապայմանն է: Գովազդային տեքստերի թարգմանության ժամանակ կարևոր է բնագրի տեղեկատվության պահպանումը, սակայն պետք է հաշվի առնել, որ անփոփոխակի բաղադրիչների կապը խիստ պայմանական է: Որոշ դեպքերում հարկ է հրաժարվել հաղորդումից՝ իմաստը, հետևաբար և տեքստի գործառույթը վերարտադրելու համար:

Անփոփոխակի քնությունը, նախ և առաջ, առնչվում է տեքստի իմաստային և գործաբանական հայեցակետերին: Անփոփոխակի իր սահմանման մեջ Ա. Շվեյցերը նշում է, որ թարգմանության ժամանակ անփոփոխ է մնում ելակետային հաղորդման բովանդակությունը (ոչ միայն իմաստային, այլ նաև գործաբանական), որը որոշվում է տվյալ հաղորդակցական ակտի գործառական բնութագրումներով, ինչպես նաև նրանց միջև հարաբերակցությամբ [9, էջ 39]: Նման դիրքորոշում է որդեգրել նաև Ջ. Լվովսկայան, որը անփոփոխակի իր բնորոշման մեջ հիմնվում է Ա. Լեոնտևի տեսակետի վրա, ըստ որի անփոփոխակը խոսքային արտահայտության ներքին ծրագիրն է, այն է՝ առարկայական-արտահայտչական կողմի գործառական առումով «ձանրաբեռնված» իմաստային տարբերի համակարգը կամ էլ գործողությունները նման տարբերի հանդեպ [6, էջ 72]: Ընթերցողի վրա որոշակի ներգործություն թողնելու նպատակով հեղինակը մշակում է իր խոսքային գործունեության ներքին ծրագիրը, որը կազմում է տեքստի գործաբանական ենթակառուցվածքը: Ըստ Լվովսկայայի՝ տեքստի իմաստային կառուցվածքում կարելի է առանձնացնել 3 բաղադրիչ՝ խոսքային

իրադրություն, գործաբանական և լեզվական (առարկայական-հասկացական) ենթակառուցվածք, որոնցից առաջին երկուսը միշտ պետք է անփոփոխ մնան թարգմանության ժամանակ [7, էջ 154-156]: Իսկ իմաստային ենթակառուցվածքը կարող է փոխվել՝ հաշվի առնելով տեքստի հեղինակի հաղորդակցական դիտավորությունը և խոսքային իրադրությունը, այսինքն՝ անփոփոխակը թարգմանության մեջ ոչ թե բացարձակ, այլ հարաբերական հասկացություն է՝ տեքստի իմաստային բաղադրիչի հարաբերակցությունը գործաբանական և իրադրային բաղադրիչների նկատմամբ:

Թարգմանության մեկնողական կաղապարներում հանդիպում ենք անփոփոխակի ընկալման այլ դիրքորոշման: Հայտնի է, որ թարգմանությունը նախ և առաջ մեկնողական ակտ է: Այսպես, ըստ Լ. Վենուտիի՝ լեզուն երբեք չի կարող պարփակել կամ առաջ բերել որևէ անփոփոխակ. այն ակտիվ և կաղապարող ուժ է, որն իր հերթին կաղապարվում է տվյալ լեզվակրի կողմից: Ներմուծելով իր մեկնաբանությունը՝ թարգմանիչը փորձում է ֆիքսել այդ փոփոխելիությունը՝ նկատի ունենալով նաև հնարավոր այլ նույնիսկ մրցակից մեկնաբանությունների գոյությունը: Չուտ մեկնողական այս կաղապարը ներկայացնելով՝ Վենուտին չի ժխտում թարգմանող և թարգմանվող տեքստերի միջև ձևական և իմաստային համապատասխանության գոյության գաղափարը, ավելին, նա պնդում է, որ այս տիպի ամեն մի համապատասխանություն ենթարկվում է որոշակի մեկնողական վերլուծության, որն արմատապես որոշվում է թիրախ լեզվի և մշակույթի կողմից [11, էջ 164-165]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ անփոփոխակի ընկալումն ու մեկնաբանությունը տարբերվում է լեզվաբանական և թարգմանաբանական գրականության մեջ, իսկ թարգմանաբանության մեջ թարգմանող և թարգմանվող տեքստերի համընդհանուր

հայեցակերպի, այն է՝ անփոփոխակի շուրջ առկա են տարբեր մեկնաբանություններ: Տվյալ քննությունը հնարավորություն է ընձեռում կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Լեզվաբանության մեջ անփոփոխակը դիտարկվում է որպես լեզվական միավոր (հնչույթ, ձևույթ, բառույթ, իմաստույթ, շարահյուսույթ), որն ի հայտ է գալիս վերացարկման արդյունքում, ունի իդեալական էություն և ներառում է իր կոնկրետ իրացումների բոլոր ընդհանուր հատկանիշները: Բացի այդ, լեզվաբանության մեջ հայտնի է նաև անփոփոխակի մի այլ ընկալում, երբ այն դիտվում է որպես լեզվական մի իրողություն, որը դրսևորվում է իմաստի ընդհանրությամբ կամ վերաբերության նույնականությամբ:

2. Թարգմանաբանության մեջ ակնհայտ է անփոփոխակի ընկալման՝ մեկը մյուսից տարբերվող երկու մոտեցում: Մի կողմից՝ այն ընկալվում է որպես մտքի անփոփոխ մեծություն, որոշակի վերացարկում, որն արտահայտվում է մտքի բովանդակության և նրա խոսքային արտահայտության բազմազանության միջև առկա անհամապատասխանությամբ՝ հաշվի առնելով, որ լեզուն և մտածողությունը փոխկապակցված, փոխայայմանավորված, բայց և միաժամանակ տարբեր երևույթներ են: Մյուս կողմից՝ անփոփոխակը բնագրի և թարգմանության տեքստերի այն ընդհանուր տարրն է (ըստ տարբեր հեղինակների՝ իրադրություն, կառուցվածք, տեղեկատվություն, գործառույթ, ոճ և այլն), որն անփոփոխ է մնում բոլոր թարգմանական վերափոխումների արդյունքում և որոշվում է հաղորդման իմաստային ու գործաբանական հայեցակերպերի և խոսքային իրադրության յուրահատուկ հարաբերակցությամբ:

3. Թարգմանության մեկնողական տեսությունների տեսանկյունից անփոփոխակը հարաբերական հասկացություն է, որն անպայմանորեն ենթադրում է որոշակի մեկնողական ակտ՝ թիրախ լեզվի և մշակույթի առանձնահատկությունների տեսանկյունից:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան, Հ. Ջ. Հայերենագիտական բառարան, Երևան, Հայաստան, 1987:
2. Бархударов Л.С. Общелингвистическое значение перевода.- В кн. Теория и практика перевода. М., 1962.
3. Сдобников В.В., Петрова О. В., Теория перевода. Москва: Восток-Запад, 2006.
4. Стрелковский Г.М., Латышев Л. К. Научно-технический перевод. М.: Просвещение, 1980.
5. Джаукян Г. Б. Универсальная теория языка. Прологомены к субстанциональной лингвистике. М.: Институт языкознания РАН, 1999.
6. Леонтьев А. А. Психоллингвистические единицы и порождение речевого высказывания. М., 1969.
7. Львовская З. Д. Теоретические проблемы перевода (на материале испанского языка). М.: Высшая школа, 1985.
8. Миньяр-Белоручев, Р. К. Теория и методы перевода. М.: Московский лицей, 1996.
9. Швейцер А. Д. К проблеме лингвистического изучения процесса перевода //«Вопросы языкознания», 1970, N4..
10. Espinosa A. M. Cuentos populares recogidos de la tradición oral de España. Madrid: Editorial Consejo superior de investigaciones científicas, 2009.
11. Venuti, L. La traducción: entre lo universal y lo local. en Tópicos del seminario (25), Puebla, 2011.

## REFERENCES

1. Petrosyan H. Z. Armenological dictionary. Yerevan: «Hayastan», 1987.
2. Barkhudarov L. S. General linguistic meaning of translation // Theory and practice of translation. Moscow, 1962.
3. Sdobnikov V. V., Petrova O. V. Theory of translation. Moscow: «Vostok-Zapad», 2006.
4. Strelkovsky G. M., Latishev L. K. Scientific-technical translation. Moscow: «Prosvecheniye», 1980.
5. Djaukian G. B. Universal theory of language. Prolegomena to substantial linguistics. Moscow: The Institute of linguistics, Russian Academy of Sciences, 1999.
6. Leontev A. A. Psycholinguistic units and speech generation. Moscow, 1969.
7. Lvovskaya Z. Theoretical problems of translation (based on Spanish language material). Moscow: Vyshaya shkola, 1985.
8. Menyar-Beloruichev R. K. Translation theory and methods. Moscow: Moskovskiy Licey, 1996.
9. Shveytser, On the problem of the linguistic study of the translation process// Linguistic issues, 1970, N4.

### On some aspects of study of invariant in translation

**A. G. Baghdasaryan**

**Abstract.** The article is dedicated to the study of the equivalent in translation based on different aspects regarding the issue. The study led to the conclusion that the equivalent is a common element of the source and translated texts (situation, information, function, style, structure, etc), which is determined by the communicative intention of the author of the original text, the functional-communicative characteristics and also by the peculiarities of the translated language and culture.

**Keywords:** *equivalent, translation, adequacy, communicative intention, functional-communicative aspect of utterance.*

### О некоторых аспектах изучения инварианта в переводе

**А. Г. Багдасарян**

**Аннотация.** Данная статья посвящается изучению инварианта в переводе, основываясь на разных аспектах этого вопроса. Исследования заключаются в установлении, что инвариант является общим элементом текстов подлинника и перевода (ситуация, информация, функция, стиль, структура и т.д.), который определяется коммуникативной интенцией автора текста оригинала, функционально-коммуникативными характеристиками данного высказывания, а также особенностями переводящего языка и его культуры.

**Ключевые слова:** *инвариант, перевод, адекватность, коммуникативная интенция, функционально-коммуникативный аспект высказывания.*